ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ալեքսան Ալեքսանյանից

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
«27» ապրիլ 2026թ.

ԻՐԱԶԵԿՈՒՄ
/հանրային հավաքի անցկացման վերաբերյալ/

Հարգելի՜ պարոն Ավինյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1. Հավաքի վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հանրապետության հրապարակ
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2026 թվականի հունիսի 03, հունիսի 04, հունիսի 05 և հունիսի 08, 17:30-22:00
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական և նախընտրական հարցերի քննարկում:
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 40.000 /քառասուն հազար/ անձ:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բաթոթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես հնարավոր է տեղադրվի՝ բեմահարթակ, կոնստրուկցիաներ, բարձրախոսներ, ձայնի

ուժեղարարեր, թմբուկներ, լեդ էկրան, տրանսպորտային միջոցներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր: Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, հնչի հանրային խոսք:

6. Հավաքին կարգադրիչներ չեն լինի:

7. Հավաքի ընթացքում նախատեսվում է երթ՝ Հանրապետության հրապարակ – Նալբանդյան փողոց – Սայաթ-Նովայի փողոց – Մաշտոցի պողոտա – Ամիրյան փողոց – Հանրապետության հրապարակ:

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ Ազգանուն Անուն Հայրանուն՝ Ալեքսան Բենիամինի Ալեքսանյան,

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքը իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումների սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը:

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

27/04/2026թ.